ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆ

«21» 02 2025 թ. Թիվ 45-Հ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի ԹԻՎ 91-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2023 թվականի մարտի 29-ի ««Դասը վարում է քննիչը» խորագրով դասընթացի առարկայական ծրագիրը և դասընթացավարներին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» թիվ 91-Լ հրամանում (այսուհետ՝ հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) հրամանի N 1 հավելվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. «Դասը վարում է քննիչը» խորագրով ծրագրի շրջանակում Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում (այսուհետ՝ ՀՀ քննչական կոմիտե) պաշտոն զբաղեցնող անձինք կարող են դասավանդել Հայաստանի Հանրապետությունում գործող հանրակրթական միջին (8-9-րդ դասարան) և ավագ (10-12 դասարան) ուսումնական հաստատություններում:».

2) հրամանի N 1 հավելվածի 4-րդ և 5-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել.

3) հրամանի N 1 հավելվածի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Դասընթացի վարումը, որպես կանոն, կազմակերպվում է դասընթացավարի ծառայության վայրի տարածքում գտնվող ուսումնական հաստատություններում՝ վերջիններիս վարչակազմի հետ նախապես համաձայնեցնելով դասավանդման օրը, ժամը, առարկայական ծրագիրը: ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք դասընթացը կարող են անցկացնել նաև իրենց նախընտրությամբ հանրակրթական ռազմական ուսումնական հաստատություններում:».

4) հրամանի N 1 հավելվածի 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. Դասավանդման արդյունքների վերաբերյալ (դասընթացավարի տվյալները, զբաղեցրած պաշտոնը, թեմայի անվանումը, դասաժամի քանակը, ուսումնական հաստատության անվանումը) ստորաբաժանումների պետերը տեղեկատվություն են ներկայացնում ՀՀ քննչական կոմիտեի իրավաբանական վարչությանը՝ մինչև հաջորդող ամսվա հինգը:».

5) հրամանի N 2 հավելվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Դասավանդում կարող է իրականացնել ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող այն անձը, ով ունի գիտական աստիճան (կոչում) կամ դասավանդման փորձ և տիրապետում է բանավոր խոսքի, լսարանի հետ հաղորդակցվելու հմտություններին:».

6) հրամանի N 2 հավելվածի 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, խորհրդականներին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց:

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ